ՆՈՐ-ԴԱՐ

№ 62 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 16 Ապրիլի 1892 Հինգշաբթի, 16 Ապրիլի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 62

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., նստած՝ 5 կոպէկ։ Ընծանորդ գրւում են Թիֆլիսում մխիթարեան հրատարակատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների րոպին 2 կ., բեկւածների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ժամանակակից խորհրդածութիւններ։

Քրոնիկոն.— Թագուհի Վայտրուէնի Կովկասում։ Կովկասի ս. Կառավարչական վերադարձը։ Հոգեհանգիստ Մակար Կաթողիկոսի տարեգարձի օրը։ Թատրոնը գլուխը։ Ս. Շահազիզեանի յոբելեանը Բագուում։ Ուսումնարանական լրնդիր։ Սեդրակեան եպիսկոպոսի և հայր Բէգնազարեանցի կրօնի դասագիրքը։ Եւ այլն։ Մի լրնդիր։ Օրինագիծ աներազախանութեան դէմ։

Բայ նամակ։ Ջրհեղեղ Բովենդաման։ Ծաղկի օրհնազանգութիւններ։

Քաղաքական.— Քաղաքական լուրեր։

Հեռագրեր։

Բանասիրական.— Տպագրութիւններ բնիթացիկ գրականութիւնից, II։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15 ապրիլի 1892 թ.

ՅԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Ամենամեծ չարիքները, որ հասել են մարդկութեան, ծնունդ են եղել մեծ մասամբ մի մի անհատների չափաւորութեան և փառամոլութեան։ Աշխարհում թագեր են կորել, իրաւունքներ են խլուել, ժողովուրդներ են ստրկացել, և այս բոլորը մի կամ մի քանի անձանց անյագ չափաւորութիւնը և կոյր փառամոլութիւնը յագեցնելու համար։

Եթէ շատ հեռու չգնանք, նոյն իսկ մեր Հայոց պատմութիւնից հարիւրաւոր օրինակներ կարող ենք առաջ բերել այս ճշմարտութիւնը հաստատելու համար։

Որքան չարիքներ հասան հայ ժողովրդի գլխին, որքան աւեր և ապականութիւն կրեց մեր երկիրը մի միայն այն պատճառով, որ Մեհրուժան Սրծրունին և Վասակ Սիւնեցին կամեցան թագաւորել Հայոց վրայ։ Պրանք, ի հարկէ, իրենց նպատակին չհասան, մինը շամփրահար և միւսը որդնալից սատակեցան. բայց նրանց պատճառով որքան ժողովուրդ սրածութեան մատնուեցաւ, որքան եկեղեցիներ կործանուեցան, որքան գրպարտութիւններ փչացան։

Պատմութիւնը մարդիկ նրա համար են սովորում, որպէս զի կեանքի մէջ նրա տուած դասերից օգուտն, որպէս զի նոյնանման դէպքերում չարիքից հեռանալով բարութիւն մտածենան։ Բայց մթթէ մեր մէջ այդպէս են անում, մթթէ պատմութեան օրինակները կարդանում են խրատել և զգուշացնել նոյն իսկ նրանց՝ որոնք բոլորի բեմամբ որոշ պաշտօնների համար կոչումն են ստանձնում ժողովրդի բարօր կառավարելու։ Ա՛խ, անձնասիրութիւնը և փառամոլութիւնը կուրացնում են նրանց աչքերը. նրանք ոչ միայն պատմութիւնը չեն տեսնում, ոչ միայն պատմութեան օրինակները չեն յիշում, այլ և չեն նշմարում կորցուածն այն ահռելի անդունդը, որի եզերքին յիսիսում են իրենք միայն վտանգ և պատիւ կորցելու նպատակով։ Նրանց ինչ հոգ թէ իրենց հետևողներն այդ անդունդի մէջ պիտի խուժին ու անհետանան, բաւական է որ իրենք կէտ նպատակին հասնեն, ցանկալի փառքի սանդուխները կոխեն...

Թողնենք փառամոլներին իրենց քայքայարձակութիւնների հետ, «զի դժուարին է ընդառ փոխել գիայատ և եթովպացւոյ զգեստութիւն». նայենք մեզ մարդկանց, որոնք բարձր մտքերից, իդէալներից և ազատամտութիւնից են խօսում, որոնք շարունակ անկեզծութեան և ազնուութեան անուանով են երգում...ինչ անուն են տալիս, այդհօք դրանք այն բոլորին, ինչ որ կատարւում է իրենց շուրջը, իրենց խորհրդով, իրենց քաջալերութեամբ։ Մտածում են երբ և իցէ այդ մասին։

Դրանք գուցէ հաւատում են որ բարի գործ են կատարում, որ իրենց ազգանուէր գէպի երջանկութիւնը տանող ճանապարհներն են հարթում։ Բայց սխալւում են չարաչար, որովհետև հենց դրանց համար է Փրկչի այն սիրոյ մարգարէութիւնը որ ասում է, «Ելեկեսցէ ժամանակ գի ամենայն՝ որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ»։

Լուսաւորութեան, խղճի ու մտքի ազատութեան այս գարում ամօթի է որ իդէալներով ոգևորուող երիտասարդութիւնը՝ կրքերով ու մոլեռանդութեամբ կուրացած, գործիք է դառնում փառամոլ և անձնասէր մարդկանց ձեռքում և իր իսկ ձեռքով իր ազգային գերեզմանն է փորում։

Ժամանակ է վերջապէս, որ այդ երիտասարդութիւնը զգաստանայ, կրքերն ու հակառակութիւնը թողնէ մի կողմ և ինքն իր գործերը քննելով՝ նրանց կարօտաբեր հետևանքները գուշակէ...։

Թողէք, բարեկամներ, թողէք, որ կոյր փառամոլութիւնը կուռէ ինքն իր գոյութեան հետ, դուք մի մտեներ ձեր իրաւունքների գոհարերութեան գնով աւազակութեան աստիճաններ մի կառուցանէք նրա համար։ Որովհետև դրանով գուք ապագայ սերունդի կենդանութեան ապրիւրներն էք ցամաքեցնում։ Եւ մի կարծէք թէ պատմութիւնը, որ փառամոլութեան կուռքերը պիտի անիծէ, նրանց երկրպագուներին ազատ կը կացուցանէ գատապարտութիւնից։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՐԱՍԹԻՄԱՆԻՑ ապրիլի 14-ին հեռագրում են «Кавказъ»-ին հետևեալը. «Այսօր երեկոյեան ժամը մօտաւորապէս վեցին հասնից այստեղ ժամանել Նորին Կայսերական Մեծութիւնն Թագուհի Կայսրուհին Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի և Միխայիլ Նիկոլայևիչի հետ Փրէյլինա Օպերովայի, Կայսերական Պալատի մենիստր գրաֆ Վորոնցով-Դաշկովի և հետևորդների խմբի ուղիղ անձերի ուղեկցութեամբ։ Ստանն և հանգստեան ջրերի բոլոր շենութիւնները գարդարուած էին գրօշակներով, գանագանագոյն լամպիոնների և ժայռի վրայ չոգեկոպարանների պլանայ վարդում է լուսաւոր վինդեր Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհու անուան սկզբնատառերով»։

—

Այսօր ապրիլի 16-ին Թիֆլիսում սպասում է Կովկասի ս. Կառավարչական վերադարձն Գրաֆ Լորիս-Մելիքովի։

—

Թեմիս Առաջնորդ գերապատիւ Մատթէոս եպիսկոպոսի կարգադրութեամբ այսօր, ապրիլի 16-ին, Հանգուցեալ Մակար կաթողիկոսի մահուան տարեդարձի օրը, Թիֆլիսի եկեղեցիներում Հանգիստներ հոգեհանգիստ կը կատարուի։

—

ԽՈՏՈՐԺՈՒՂ գիւղից (Սպերի գաւառ, Կարնոյ Նահանգ).— Մեր և շրջակայ գիւղերի բնակիչները սարսափի մէջ են. Նրանց երևան է եկել իրեցպէս հոչակաւոր Գըզք-Նազան-օղլի աւազակապետը, որ ահա չորս տարի է աւազակութեամբ է պարապում և այս ձմեռ Ղրիմ էր գնացած։ Գըզք-Նազան-օղլին, որի հետ միացած էն իննը ընկերները, յայտարարել է, որ ոչ ձերի է նայելու և ոչ երիտասարդի, ոչ ապուն է նայելու և ոչ ապջկայ. ձեռք ընկածին սպանելու է, ձեռք հասածը կողոպտելու։ Ժողովուրդն անել գրութեան մէջ է. միտքան չեն, որ պետական պահապանները խնդրին. Գիշում են 1887—79 թուականների գէպքերը, երբ ինչպէս Կատարչին գիւղում հայ-պատանիների եկեղեցին կողոպտեցին և երեք հոգի սպանեցին, երբ ինչպէս Մշոյբերդում գիւղում հայ-կաթոլիկների վարպապետ աունն ալրեցին և ապիր շատ եկեղեցական գործութիւններ ցիշում են —և մօտալուտ վտանգը աւելի ևս սարսափի մէջ է գնում նրանց։

—

Սմբատ Շահազիզեանի յոբելեանը նրա նախկին աշակերտներից սկսնք ուն են նաև Բագուում և իրենց ազգային պատուին հիմնուելի գրականան փոնդին ժողովարարութեամբ հաւաքած 1,110 րուբլի են նուիրել։

—

Ս. ԷՋՄԻԱՍՆԻՑ «Արձագանք»-ին հաղորդում են, որ բարեկրօն Սարգիս քահանայ Բէգնազարեանցի կազմած «Համառօտ քրիստոնէական վարդապետութեան» դասագիրքը քննել է և իբրև Հայաստանեայց առաքելական եկեղեցու հոգևոր համաձայն մի շարադրութիւն ազագրելու հաւանութիւն է տուել Սեդրակեան Արիասակէս գեր. եպիսկոպոսը։

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ խնդիր է քննւում առանց քննութեան միւս դասարանն անցկացնելու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

II.

Մոլորութիւնների սանձարձակ և համարձակ զարգանալուն քիչ չէ նրպաստում բառերի իրենց իմաստին սրամտաբանօրէն հակառակ նշանակութեամբ գործածելը։ Վերջին է գուշակել ազդեցութիւնը Ճարպիկ քարոզչի, գրական գործչի, որ յայտնի է իւր անբարոյականութեամբը, բայց խօսելիս՝ իւր իսկ անբարոյականութեան համար իրեն ասողներին, որոնք նրա բնաւորութեան հակառակ բևեռն են կազմում, անբարոյական է անուանում, իսկ բարոյական իրեն միայն և իւրայիններին։ Ճարպիկ մարդն ինչը չի կարող անել ամբոխի մէջ։ Մանաւանդ որ ամբոխի համար ոչ այնքան բովանդակութիւնն ունի նշանակութիւնը, որքան ձևը։ Այստեղ բարու, գեղեցկի, Ճշմարտի իմաստին հակառակ գործերը բարոյականութեան անունով հրապարակ են հանւում։ Ի հարկէ այս նորատակ բարոյականութիւնն իրեն չատուկ մի առանձնութիւն է տալիս ամբոխի մարդկանց հերիակայութեան մէջ և նրանց իւր հանդէպ քաջալում։

Այսպիսի չատուկ վիճակի են ենթարկուել մեզնում առաջադէմ, ազատամիտ ու խստաբարոյ բառերը։ Կան մարդիկ, որոնց ամբողջ ոյժը կայանում է նրանում, որ բարձր գոռում են դէպի աշխարհն գլխաւոր երկրորդական բոլոր կողմերը։ Այդ ահռելի լռացնող գոռ ու գոչի մէջ մի բան միայն լսւում է. «ազատամտութիւն, ազատամտութիւն... մեր հակառակորդները խստաբարոյ են, չմտադէմ ու անգնիւ, նրանք ոտքի վնասն են ցանկանում չգուստ իրենց անձնական չահերի»։ Եւ ահա ամբոխի մարդիկ, որոնք ոչ Ճաշակ ունեն, ոչ ընդունակ են իւրաքանչիւր ձևի մէջ ներքին իմաստ, բովանդակութիւն, դաղափար որոնել, կուրօրէն հետևում են այդ ազատականներին, առանց մի րոպէ կանգնելու, մտածելու, չափ ու տարու։ Գոռում են և առաջ վազում. ինչու համար, ուր են վազում, մեծամասնութիւնը չգիտէ։

Սրանք կազմում են մի կուսակցութիւն, որ վերջերումս Թիֆլիսում «խամաճանչների» խումբ անունն ստացաւ։

* * *

Հաղուագեայ Բաֆֆին Գաղակատան ժողովրդական յուզումների պատկերն է տուել։ Ինչպէս են կատարուում այդ յուզումները։ Մի քանի Ճարպիկներ, ընդհանրապէս «ղօղիք» քաղաքի մի ծայրից դուրս են գալիս և առաջ գնում անդադար գոռալով։

«Եա հա՛ւ... եա հա՛ռկ...»

Փողոցների գանգատն անկիւններից դուրս են գալիս նորանոր տարրեր. խումբը մեծանում, ստուարանում է, որ առաջ է դիմում անդադար գոռալով.

«Եա հա՛ւ... եա հա՛ռկ...

Բազմութեան առաջին չարքերը ղազէք և մեծամասնութիւնից հարցրէք՝—ինչ են ուզում։ Իրենք էլ չգիտեն...

Եա ո՛հ... եա հա՛ռկ...

Այսպէս է մեզնում և «խամաճանչների» կուսակցութիւնը։

Այդ կուսակցութիւնն է ահաւասիկ, որ իրեն սեպհականել է «առաջադէմ» անունը։ Բայց առաջադիմութիւնը կամքի և բանականութեան գործ է։ Նրամական յատկութեամբ առաջնորդուելը, ինքնուրոյն մտածելն ու դատելը իմանալը, գիմագրկի լինելը կարող են միայն ստուգատես նշաններ լինել և ոչ երբէք առաջադէմ մարդու։ Խոստովանում եմ, ես բոլորովին նախանձում եմ այդ կուսակցութեան վիճակին. նախանձում եմ այն սրտոտութիւններին, որ վայելում է այդ կուսակցութիւնը։ Նախանձում եմ և որքան... Բայց դա նախանձ էլ չէ, այլ բարկութիւն, դայրոյթ, որ առաջ է գալիս իրերի ժամանակակից դրութիւնից։ Ազագայ պատմիչը նկատելով մեր մտաւոր կեդրոնների պատմութիւնը, ցոյց կտայ այդ դրութեան էութիւնը, ցոյց կըտայ ցիշածս նախանձի ծագման պատճառները, ըստ որում նա ոչ մի անհատական, այլ հասարակական տիպական երևոյթ է։ Այն ժամանակ միայն քոզը կըպատուի, և մերկապարանոց երևան կգան կուսակցութիւնները իրենց ամբողջ ներքին և արտաքին հասակով. այն ժամանակ միայն ընդհանուրին հասկանալի կըլինի, մի րոպեդ է մտածուած խստաբարոյութիւնը և որտեղ, իսկական առաջադիմութիւնը։

* * *

Կուսակցութիւնները կեանքի գաղափարներ են, ինքնուրոյն մտածելու ընդունակ անհատների միութիւն։ Կուսակցութիւնը կեանքի գաղափարներ է, որոնք իրենց գործադրութեան համար կազմակերպութիւն են ստեղծում

Ալեքսանդր Գ-ի ժամանակ Ռուսաստանի ներքին քաղաքականության մեջ նկատելի փոփոխություն տեղի ունեցավ։ Ռուսական հասարակության մեջ ուժեղ հակազդեցություն առաջացավ Ալեքսանդր II-ի ժամանակ կատարված ազատական բարեփոխումների դեմ։ Ռուսական ազնվականությունը, որ կորցրել էր իր նախկին տնտեսական և քաղաքական նշանակությունը, ձգտում էր վերականգնել իր կորցրած դիրքերը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը, որ հենվում էր ազնվականության վրա, ձգտում էր ամրապնդել ինքնակալությունը, ուժեղացնել ոստիկանական հսկողությունը, սահմանափակել ազատությունները։ Ալեքսանդր III-ի ներքին քաղաքականության մեջ կարևոր տեղ էր գրավում ռուսական ազգայնականության քաղաքականությունը։ Ռուսական ազգայնականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։ Ռուսական ազգայնականության քաղաքականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։

Ռուսական ազգայնականության քաղաքականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։ Ռուսական ազգայնականության քաղաքականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։

Ռուսական ազգայնականության քաղաքականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։ Ռուսական ազգայնականության քաղաքականությունը, որ ուղղված էր ռուսական ազգի գերակայության գաղափարի վրա, ձգտում էր ռուսական ազգի շուրջ համախմբել ամբողջ ազգաբնակչությունը, ռուսացնել ազգային փոքրամասնությունները, ամրապնդել ինքնակալությունը։ Ալեքսանդր III-ի կառավարությունը հետևողականորեն իրագործում էր ռուսական ազգայնականության քաղաքականությունը։

Քոխվան եասաուլի ցանկութեան համաձայն նրան տեղ է տալիս գըլխաւորապէս աղքատի—(ակռքի կրաքաղծի) տանը. աղքատ տան տէրը եասաուլին սովորաբար պէտք է պահպանէ օր ու գիշերը և կամ չատ՝ երկու օր, եթէ հարկը հաւաքելու ժամանակ է. նա եասաուլի հետ տեղատրուում է իւր գոմում, իսկ եասաուլին իւր ապրուստ խրճիթում ընտանեքի հետ միասին.

Եասաուլը հրամայում է աղքատին, որ նա իւր համար թէյ պատրաստի, իսկ հիւր համար առատ և ընտրովի գաթի, (գիւղացու հաշուով, ի հարկ է) խոտ և գարեման, հետ թիմարի, ջուր տայ... մի խօսքով և՛ նրան և նրա հիւն ծառայի, թէև հենց ինքը՝ եասաուլը բաւիս բուն նշանակութեամբ այդպիսի մի ծառայ է իրեն, հիւն և ուրիշներին.

Լաւ, գիւղացին կենդանուն ծառայութեան անելուց յետոյ գալիս է կանգնում եասաուլ ծառայի առաջ և ասում.

—Ա՛յդ ջան, ո՛չ չայ ունիմ, ո՛չ շաքար, մի հատ կը մորթեմ, հարևանից մի գդալ եղ կուզեմ կատակեմ կը եօլայ գնա, աղքատ եմ...

—Ուրախ մի անիր, ունես չունես պէտք է ճարես, եթէ ոչ քոխվին կը կանչեմ կաշիդ կմաշկենք...

Դէհ, ինչ պիտի անի աղքատը. գընում է իւր հենց հաւից—տան միակ հարստութիւնից մինը բռնում, բնատեղից էլ մի երկու ձու վերցնում ու գնում է վաշխառու շաքարավաճառ մօտ, սա էլ 20 կոպէկանոց հաւը 10 կոպէկով է վերցնում, շաքարի գրվանքան էլ 30 կոպէկով վաճառում... գիւղացին առնում է գալի տուն, բայց ո՛չ ինքնաեռ ունի, ո՛չ թէյի բաժակներ, ո՛չ անօթներ, պղնձով ջուր է տաքացնում, եասաուլը բարկանում է և պղնձով ջուրը աքացիով դրան տակը շպրտում և մրտակիկով ապքատին ուղարկում ուղելու, Ճարելու. Գիւղացին հարուստներից գընում ուզում բերում է, բայց թէյի պատրաստելը չի իմանում, այտեղ էլ մի երկու մարտակ է ուտում. վերջապէս թէյը պատրաստ է, եասաուլն ինչքան ուզում է լաղ խմէ և մնացորդը գըրպանն ածէ, իսկ կերակրի՝ լաւ կերակրի պատրաստելու հրամանը տալիս է խմելուց առաջ. գիւղացին մօտենում է ծառայ ագային և ասում.—Ա՛յդ ջան, ուզում ես մի հատ մորթեմ, թէ երկու—«Երկու վառիկ էլ մորթիր, ձու էլ եփիր, օղի և մի քիչ մեղր ու կարագ էլ Ճարիր»։

—Ադա ջան, մենք Ճանճ (մեղու) չունենք.

—Ուրիշից մի անիլ, Ճարի...

Երկու հաւերն եփուած են. եասաուլների հետ, լոնչէ*) վրայ դրած գիւղացին մօտ է բերում, իսկ իւր կինը Ճուրը օրտին դրած լաղովի Ճուրն ջուր է ածում... Բայց յանկարծ եասաուլը հաւերից մինը նկատում է դրան տակն ասելով. «Ինչ-որ լաւ է, տարօրակ», գնում նորը մորթիր»։ Երրորդ հաւն էլ մորթում է, ուրեմն հինգ հաւից մնում է միևը, որը գիւղացին լաղխս պիտի դնի, որ միւս եկողին էլ կերակրէ։ Հերիք գալիս է օղի խմելուն, մեղր ուտելուն. մեղր չկայ, բայց լինչ կայ,—մարակ Ճեմ, քօմախ, գրանից յետոյ պարտք և մեղր ու կարագ, իսկ գրանից յետոյ,—գառն աղքատութիւն։

Այս իրողութիւն է և գառն Ճշմարտութիւն, կատարւում է շատ և շատ տեղերում։

Աւելի վատ բան, գիւղացին եասաուլին լաղնում է իւր տան մէջ կնոջ մօտ, ինքը ցաւեր, գարդեր, հոգս շատ ունի, մանուանդ, եթէ մենակ մարդ է, դուրս է գնում այգին, գոմը և այլն, իսկ եասաուլը տանը նրա տգէտ կնոջ հետ քաղցր պոյցներ է անում...

Եւ դարձեալ, պատահում է շատ անգամ, որ այդ օրինաւոր եասաուլները և կարատներն անմեղ և տգէտ-խորագէտ նահապետական աչքի առաջ իրենց Ճերն պատճեհնում ու արօրում են նրա արաբ, որի մշակութեամբ ապրմելին մաշել է իւր ամբողջ մարմնի կազմուածքը, քրտինքի մէջ փոխցրել է իւր Ճորձերը՝ չափին ու առջակապը և ուռզել արտ հողը, որով և հարկ պէտք է վճարէ և ուտէն, բնատնիք պէտք է պահպանէ. բայց եթէ հողագործը հարմարակում է եասաուլին, կարատէլն մի բան ասել, իւր դառն զգացմունքը յայտնել, պատրաստ է նրա համար ամենայն հայհոյանքը և պարսկական մարակը, որ մղկիա է գալս անմեղի թիկունքը հարուած հարուածի յետևից։

Պարձեալ կրկնում ենք, այս բանը կատարւում է հետևս օրինաւոր իշխանաւորներից ծածուկ օրինազանցների Ճեռքով, բայց նախապաշարուած գիւղացին ոգէս գիւղացին չէ հասկանում օրէնքը, չէ հասկանում, որ այդ ծառան՝ եասաուլը իւր նման մի հասարակ գիւղացի է փչ զանազանութեամբ միայն, այսինքն՝ զինաւորուած է և պրիստաւին կամ մի ուրիշին է ծառայում. չէ հասկանում և չատ անգամ հասկացնող էլ չկայ, որ եասաուլը գոր

*) Փայտեայ մատուցարան։

վերանորոգութիւն բաւերը, «Կան մարդիկ, չատ Ճիշտ կերպով նկատել էր ալ. Լէոն երկու տարի առաջ «Մուրճ» ամսագրի էջերում, որոնք գժուում են այդ գեղեցիկ բաւերի վրայ, հոգով ու մարմնով գերի ու ըստրուկ են դառնում այդ բաւերին, մինչև անգամ յանցանքները են գործում նրանց պատճառով. գործում են և իրենց խղճէր հանգստացնում են նրանով, որ յանցանքը գործել են յանուն և ի փառս լուսաւորութեան, քաղաքակրթութեան՝ ինչ որ ուզում էր, լաղ լինի, միայն մէջ տեղ լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, յառաջադիմութիւն բաւերը գոյ ածուին... Այդպէս դատում են, այդպէս համոզուում և ականջ խցած, ոչ մի ազատութեան, ոչ մի բողոքի ուշադրութիւն չդնելով, առաջ են վազում...»

Որքան Ճիշտ նկատողութիւն, ընթերցող.

«Այդպիսի տենդային արագութեամբ է մեր մէջ լծախանցում ժամանակի պահանջը, այն, ինչ որ լուսաւորութիւն է կոչւում. Այդ պահանջն այնքան խառնել տակն ու վրայ է արել մեր մտքերը, հասկացողութիւնները, այնպիսի մեծ ուժով տեղը չշարժում է իւր մարդկային պատիւն ու գթացմունքը, չէ հասկանում, հասկացնող չկայ, որ պրեստուլ կամ անառուստուեի ծառան իրաւունք չունի՝ նրան ծեծելու և պատժելու, այլ այդ՝ պատժելու իրաւունքը վերապահուած է օրինաւոր իշխանութեան ատանց ծեծի միայն։

Աղքատ գիւղացին փոխանակ այդ անկարգութիւնները գնալու իշխանաւորին բողոքելու, իւր մարդկային պատիւը վերականգնելու, յանցաւորին պատժել տալու, յուսալ ու մտնէ անմեղ տպրուստեան շնորհիւ տանում է ամեն տեսակ զրկանք, կարում է իւր ընտանեքի բերանի Ճաքէն և միևնոյն անգամ մուրում է և բաւականութիւն տալիս օրինապանցին։

Բայց որպէս զի մի օր մեր գատաստանները աղքատ ժողովուրդն այդ տեսակ ագէզ Հարստահարութեան տակ չհեծէ, որպէս զի այդ ատանդական սովորութիւնը եասաուլների կեանքից վերանայ, անմեղ-ագէտ հայ, Թուրք և այլն գիւղական աղքատների նեղութիւններից միևը կամ միւսը պահպան և նրա ցաւին դարման ու գեղ անուն, պէտք է, որ այդ օրինազանցութիւնները ծածուկ չմնան օրինաւոր իշխանաւորներից, որովհետև այդպիսի գէպքում մենք համոզուած ենք, որ այլ ևս ոչ մի անատնի գեղում չի կատարուել օրէնքի անունով ծածկարար գործուղ այդ հատարտակ ծառայողների Ճեռքով։

Լսայոյս ենք, որ մեր գատաստանները և միւս պատուաւոր իշխանաւորները ուշադրութիւն կդարձնեն այդ բանի վրայ, հրամայելով յետևյալ ծառայողներին երբեմն ոտՃով կերակրուելու և ոչինչ ինքնագլուխ հրամայելու գիւղացիներին։

Ց. Հաղորեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—Հռոմից հաղորդում են, որ Վատիկանումն էլ երկիւղ ունին անիշխանականներից, որովհետև մի անստորագիր նամակ է ստացուած, որով սպառնում են ս. Պետրոսի եկեղեցին օդ ցնդել։

—Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ Ռուսիայից Պաղեստին գաղթող հրէաների Թիւն օր օրի վրայ աւելանում է. իւրաքանչիւր շաբթում գաղթողների Թիւն 200 ից 300-ի է հասնում։ Աւդէն Պաղեստին գաղթած հրէաների ընդհանուր Թիւը հասնում է մօտ 130,000-ի։

—Նահապետից հաղորդում են, որ Զինաստանում մի նոր շարժում է պատրաստում օտարերկրացիների դէմ, որ չատ բանով տարբերուելու է մինչև այժմ եղածներից։ Զինացի մէծամէծներից «հայրենասէրների միութեան» նման մի ընկերութիւն է կազմուել, որ ամբողջ կայսրութեան մէջ իւր կոզմնակիցներն ունի և ամեն տեղ աշխատում է ձնչել օտարերկրացիների ազդեցութիւնը։ Այդ ընկերութեան ծրագիրն այն է, որ պինեալ ուժերը կեդրոնացնեն և ազգային անկախ նահատօրմիով տեղծեն։ Եւրոպական մի քանի հայրենասիրական ընկերութիւնների նման, չինական միութիւնը մատղիր է տարբագրութեամբ հարկատուր միջոցներ Ճեռք բերել։ Եւրոպա են ուղարկուած մի քանի գործակալներ պինուորական տեխնիկական գործն ուսումնասիրելու համար։ Երբ այդ նախապատրաստական աշխատանքները վերջացրած կը լինին, միութիւնը գործի ազակցութեան վրայ յենուելով, գահընկէց կ'ան՝ Մանջուրեան կայսերական տունը և Չինաստանից կ'արտաքսէ բոլոր օտարերկրացիներին։

—Hamburger Nachrichten լրագրի մէջ տպուած է Բիսմարկի նամակը, որով նա չնորհակալութիւն է յայտնում իւր ծննդեան օրն իրեն չնորհաւորողներին։ Նամակի մէջ ի միջի այլոց ասուած է. «Ես անհաչտ Թշնամիներ ունիմ, բայց ուրախ եմ, որ և բազմաթիւ բարեկամներ ունիմ»։

—Պարիսի ասիկանապետը պատուիրել է ստացել այս օրերս, որ ինչպէս երեւացել է, այսպէս կոչուած «գժոխային մեքենայ» է եղել։

—Հաղիւատնից հեռագրում են, որ Հաստատակած հաստատակապետութեան մէջ Հիւսիսային Ամերիկայում ապստամբութիւն է ծագել. ապստամբները ակրել են կառավարութեան պատկանող մի չոգենաւի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտ։ – Օբենբուրգի և Ուֆայի նահանգներում ամբողջ ըրթութեամբ գատական բարենորոգումները են մտցուած։

ՊԱՐԻԶ. –Վերի Ճաշարանն, ուր Հերբարտած էր Ռատշոլը, օգ ցնգից Պայթումն առաջացել է ներքնատունը Ճգած առաքից. մի քանի հոգի Ճերքակալուած են. Զօրքերը մաքրում են փլատակները և պահպանում են կարգը։

ՍԱՐԱՏՈՎ. —Պակրովսկ Ուրալեան շինուելի երկաթուղու վրայ աշխատանքները սկսում են։

ԿՈՍՏՐՈՄԱ. – Վոլգայի սառուցը հալուել, վերից չոգենաւեր եկան։

ԲԵՐԼԻՆ. —Երէկ այստեղ սոցիալիստների և անիշխանականների աներում խուզարկութիւններ եղան, 20 հոգի բանտարկուած են, բռնուած են սոցիալիստների և անիշխանականների տպագրած Թերթեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտ. — Թագուհի Կայսրուհին, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան և Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը այսօր երեկոեան 4½ ժամին ժամանեցին Աբասթումանի։

ՀՌՈՄ. —Անցեալ երեկոյ Հռոմում և ուրիշ գլխաւոր քաղաքներում բանտարկուեցան անիշխանականների գլխաւորները։

Պ ՐԻՋ.—Բաւաշոլը և Սիմոնը անօրոշ ժամանակով ազատանքի են Թարկուեցին. մնացած երեք մեղադրեալներն արդարացած են։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

14 մարտի.

Լ՚ոպ՚ան 97,6⅛, 97,20. 97,65
Բերլին 47,85. 47,⅝, 47,85
Պարիզ 38,70 38,60, 38,70
Պոլս խմպրիալ 7 ր. 80կ. գն. 7 ր 82 կ. գ՚ն
Մաքս. կուպ՚ոն 155,⅝ ծախ 156⅛ ր. գ՚ն
Ազատ . . . . . 1, ր. 12 կ. գ՚ն.
Բորսային դիս . . 4¼ ր. վինչև ½ % գ՚ն.
Պետական-բանկի 5՝ ₀ ազատ.
1-ին շրջանի . . . . 103 ր. կ. ծախ.
2-րդ . . . . . 102 ր. 87 կ. ծախ
6-րդ . . . . . 2 ր. 87 կ. ծախ.
100 և 1000 ր. արժեքներ փոխառութեան 5% ազատ.
1-ին շրջանի. . . . . .
2-րդ . . . . . 102, ր. — կ. ծախ.
3-րդ . . . . . 103 ր. 12 կ. ծախ.
Առաջին 5% երբեմն փոխառութեան. ազատ . . . . . 237 ր. — կ. ծախ.
. . . . . 2-րդ 219½ ր. — կ. ծախ.
Սրբոյ վոլ. Ազն. Հզ.
բանկի . . . . . 197⅛ ր. — ծախ.
5½% բէնաւոր . . . . . ր. կ. ծախ.
Փրկի քաղ. վարկի բնակ.
օբլիգ. . . . . կ. ծախ.
Բորսայի որոշապրութիւնը խաղալ է։

Թ՚ղթակիր —Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Շահկմանը, և Զոլայի «Մարդ-Գազանը», և առաջարկեն, Թէ գրանցից մէկը նաւիբը ընթերցող հասարակութեանը, ես հանգիստ խղճով, առանց մի րոպէ տատանուելու կըծալեմ, յետ կդրնեմ երկրորդը և Իրենի վաստակը հրճուանքով կընուիրեմ հասարակութեանը՝ այն խորին համոզմունքով, որ այդ գրքի ընթերցումից ընթերցողի մխաքը կը բարձրանայ, զգացմունքները կընըքանան, որ նա միաժամանակ կըներգործէ կարդացողի եւ ակատութեան, մտքի, սրտի ու կամքի վրայ՝ նա կրնպաստէ հասարակական իդէալ ստեղծելուն և կամքը դէպ այն կտրամադրէ։

Եւ միԹէ կարող են գտնուիլ Ղմարդիկ, որ դրա համար ինձ յետամնաց ասեն։ ՆԹէ կգտնուին և կասեն սիրով կընդունեմ այն, յիշելով, որ շատ բաւեր մեզնում իրենց խմաստով չեն գործադրուում։ Բայց այստեղ խնդրակէս յետամնացութիւն բառի տեղը չէ. գըրանք նոր բաւեր են, որ շատ անգամ անգիտակցաբար աչ ու ձախ են շպրտուում։ Սա ախտ է, որ դիւնք անխախտ նորաստեղծութեան։ Եւ այդպիսի վիճակի ենԹարկուած են մեզնում լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, ինչ որ ուզում էր, լաղ լինի, միայն մէջ տեղ լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, յառաջադիմութիւն բաւերը գործ ածուին... Այդպէս դատում են, այդպէս համոզուում և ականջ խցած, ոչ մի ազատութեան, ոչ մի բողոքի ուշադրութիւն չդնելով, առաջ են վազում...»

Որքան Ճիշտ նկատողութիւն, ընթերցող.

«Այդպիսի տենդային արագութեամբ է մեր մէջ լծախանցում ժամանակի պահանջը, այն, ինչ որ լուսաւորութիւն է կոչւում. Այդ պահանջն այնքան խառնել տակն ու վրայ է արել մեր մտքերը, հասկացողութիւնները, այնպիսի մեծ ուժով

է Ճմլել, տափակացրել մեր կամքը, որ մենք միայն մի բան գիտենք-լաւ մարուել ժամանակին, գնալ նրա հետ արագութեամբ...»

Այդպէս էր խոստովանում պարոնը երկու տարի առաջ. և որքան Ճիշտ Ցարմարուել ժամանակին, լոգ տա հոսանքի հետ և առաջադիմել անուանել իւր այդ արբած գրութիւնը, այդ է մեր ժամանակի իրը օգին։ Ով հերոս է կանգնում, ով Ծիծաղում է այդպիսի գրութեան վրայ, որ ժամանակի մոլորութեան անէծքի ոգին է, նա «յետամնաց» է, «խաւարամիտ» է։ Այն ժամանակ մեր յոգեւաճագիրը դեռ աւելի հետևս էր գնում, այն ժամանակ նա առաջարկում էր նահապետական աշխարհից դուրս բերել մեզ համար իդէալները...երևի նկատելով որ ամենածանր յետադիմութիւն է քարոզում։

Բայց այժմ. այժմ ժամանակները փոխուել են. Նորասիրութեան ախտն աւելի է ուժգնացել, այնպէս՝ որ այնպէս դաստղներին էլ իւր բռնութեանն է ենԹարկել։

Ո՞ւ ժամանակները, ո՛ւ մարդիկ։

* * *

Գանք գարձեալ մեր խնդրին։ Արդէն ասացինք, որ Եասաուլականի վէպին առաջնական տեղ չտալով մեր վիպագրութեան մէջ ոչինչ յետագիմութիւն չենք գարղում։ Եւ ոչ միայն այդ, այլ և իդէալով լուսաբանուած երկին գլխաւոր նշանակութիւն տալով, ֆնգմաջկում փոփագող և և Ձգտող ենք հանդիսանում բուն առաջադիմութեան։ Մենք մեր իդէալներն ու ոսկեղտուն ապագայումն ենք տեսնում և հաւատում ենք նրա գոյութեանը, ապագայ՝ որ ներկայի և անցեալի հետ կապուած է պատմական օղակներով, որ նրանց չարունակութիւնն է։ Խոստովանում եմ, բնապաշտական դպրոցի երկրպագուներն էս կարող են յետադիմութեան Թշնամի և առաջադիմութեան բարեկամ լինել։ Բայց երանի բոլոր Ճանապարհները Հռոմ տանէին։ Առաջադիմութիւն ասելով հասկանում ենք Ձգտումն դէպ իդէալական երջանկութեան։ Սա կայն որպէս անհատի, նոյնպէս և հասարակութեան, ազգի առաջադիմութիւնը կարող է լինել գործնական, կարող է լինել և իդէալական։ Երբեմն պատահում է, որ ամբողջ շրջաններ կատարում է դրանցից մէկը կամ միւսը։ Պատահում է, որ մարդիկ

Ճիշտ են բերում գիտութեան պաշար, հարուստ տեղեկութիւններ, բայց առանց իդէալների. այսպիսի դէպքում նորանոր տեղեկութիւնների հարուստ պաշարը մարդկանց սոցիալական գրութիւնների մէջ ոչ մի փոփոխութիւն, երջանկութիւն չէ մտցնում. Եւ ընդհակառակը լինում են ժամանակներ, երբ կան իդէալներ, սակայն նրանց իրականացնելու, արիւն ու մարմին տալու համար պակասում է գիտութիւն, տեղեկութիւն։ Յանկարծով այնպիսի վիպագրութիւն, որ իրական կեանքն Ճիշտ գուգընԹացարար տալիս է և իդէալական Ձգտումներ դէպի գեղեցիկը, բարին ու Ճշմարիտը, ցանկանում ենք այնպիսի առաջադիմութիւն, որ Թէ գործնական է և Թէ իդէալական։

Մեր հասարակութեանց պէս հասարակութիւններին լոկ իրական կեանքի լուսանկարը տալով, ոչինչ չենք չինել, հարկաւոր է դրա հետ և իդէալ տալ։ Եւ ոչ միայն հարկաւոր է, այլ և անհրաժեշտ է այդ։

Ց. Հաղորդեանց։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պաշտօնով Դանձակ տեղափոխուելու պատճառով խնդրում եմ «Հանրամատչելի բժշկարանիս» բաժանորդներին այսուհետև դիմել ինձ հետևեալ հասցէով. Въ г. Елисаветполь помощнику губерскаго врача Доктору Медицины Григоріо Никитчу Теръ-Григорьянцъ.

Որովհետև բաժանորդների թիւը հասնում է առ այժմ մինչև 278-ի, ուստի ստիպուեցայ հրատարակութեան հետևեալ մասերն աւելի փոքր թուով տպագրել (600)։ Առաջին հատորի երկրորդ մասը, որի բովանդակութիւնն է բոլոր վարակիչ հիւանդութիւնների նկարագրութիւնները, մամուլի տակն է և շուտով լոյս կտեսնէ, այնուհետև կրտպագրուի երրորդ մասը – Վէներական հիւանդութիւնները, չորրորդ մասը — Մարդու կազմուածքի ֆիլիօլոգիան և ընդհանուր հիւանդաբանական եզրակացութիւնները և հանրամատչելի առողջապահութիւն։ Այս բոլոր չորս մասերը կրկազմեն առաջին հատորը։ Իսկ այնուհետև կտպագրուի մաս մաս հաւամաձայն մեր յայտարարութեան։ Բոլոր հրատարակութիւնը կվերջացնայ տպագրութեամբ մինչև մայիս ամիսը 1893 թ.։

Բաժանորդագրութիւնը շարունակւում է և երկու հատորի գինն է 3 րուբլի։

Բժշկապետ Տէր-Գրիգորեան Թիֆլիսեցի։

—

Ինչպէս գրել էի «Նոր-Դար»-ին, անցեալ և ներկայ տարիների Վարդանանց տօնի հանդէսներից գոյացած արդիւնքները՝ 93 ր. 51 կոպ. ինձ մօտ էր պահուած, որ վերջերս տեղիս հայ հասարակութեան մեծամասնութեան ցանկութեան համեմատ արդէն վճռուած հարցի (մեր գերեզմանատան շրջապատ չինել տալու) համար մըսխուեցաւ, սակայն այդ գումարը բաւական չլինելու պատճառով ժողովրդի թախանձանօք մի քանի անձեր կամաւոր նուէրներ էլ հաւաքեցին թէ հայերից և թէ օտարազգիներից։ Նուէրներ հաւաքուելում չնորհակալութեան արժանի են մասնաւորապէս պ. պ. Յովհաննէս Թիւրքեան, և Միքայէլ Ալխազեան և չինութեան գործում պ. պ. Զաքարիա Ալխազեան և Հայկ Ռափայէլեան։ Շրջապատն արդէն չինուել վերջացել է, մնում է մեայն շրջապատի ներսից ծառեր տնկել տալ, որն անհրաժեշտ է։ Դրա համար դարձեալ մի փոքր գումար է պակասում և նորից նուէրներ են հաւաքելու։ անտարակոյս չենք, որ ժողովուրդը չի դժուարանալ մի փոքր օժանդակութիւն էլս անել, քանի որ հասարակական չինութիւնը կիսատատար թողնելն ընդհանուրիս համար պատուարեր չէ։

Եր. Մ. Պոյաճեան։
Փոթի, 7 ապրիլի։

Պոստային կառքերի երթեւեկութիւն ռազմա-վիրական տրակտի վրայ։

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, վաղիւանից հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Նոյն հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վաղիւանից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վից հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Անդրկովկասեան երկաթուղի

—

Թիֆլիսից Բաքու գն. գնաց. 6 ժ. 50 ր. եր.։
» » ապ.-մարգ. — 9 ժ. 30 ր. առ.։
Բաքուից Թիֆ. հաս. պ. 9 ժ. 52 ր. եր.։
» ապ.-մարգ. — 12 ժ. 25 ր. ցեր.։
Թիֆլիսից Բագու գն. 1 ժ. 20 ր. ցեր.։
Բագուից Թիֆլիս հաս. 5 ժ. 20 ր. եր.։
Թիֆլիսից Դանհ. գն. 9 ժ. 20 ր. եր.։
Դանհակից Թիֆլիս հաս. 7 ժ 30 ր. առ.։

Ուռուսյ շոգենաւային ընկերութիւն։
Երեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին շրջանառու ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բաթումից հասնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։ Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

—

Պոստային եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեւեկութիւն Փոթիի, Բաթումի եւ Օդեսայի միջեւ։

Փոթի հասնում է.

Պոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

Փոթիից դուրս է գնում.

Պոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ճանապարհին գանուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Պոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8 ին, Օդեսա և Ճանապարհին գանուած նաւահանգիստները։

Ապրանքակիր մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1 ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վերայ ընդունում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի պաշարեղէնի։

Գործակալութիւնը գտնում է Թիֆլիսի ապ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



10—6

ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ ԱՏԵՆԻ ՄԷՋ

Նշանակուած է ծանրագին վարձով տալու համար ամենատեսակ արդիւնքը Ս. Էջմիածնի Աթոռին պատկանեալ դիւղերի, այն է՝ Վաղարշապատի 20 և 22 մայիսի տարուայ. Օշականի և Մաղնուոյ 26 և 29 նոյն ամսոյ. Եղուարդի և Մաստարայ 3 և 5 յունիսի. և Իջեւանի 8 և 10 նոյն ամսոյ։

Անդամ կոնսիստորիալի՝ Համազասպ վարդապետ։

(306) 4—2.

ՄԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ, որ լաւ գիտէ ֆրանսերէն, ռուսերէն, լեհերէն, գերմաներէն լեզուներն և մուզիկ, պէտք է պարտաւորէ Խնդրում է դիմել՝ Ростовъ на Дону Рождественская ул., Музыкальная школа, Сояръ Вашкевичъ.

(304) 6—4.

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի հրատարակութեան մէջ

Վաճառւում է

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑԻ

ՆԻՒԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերնագրով գիրքը, որ պարունակում է իւր մէջ Պարսկաստանի ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐԻ կենսագրութիւնն ընդ նմին բազմազան և բազմաթիւ տեղեկութիւններ Պարսկաստանի Հայոց անգիր պատմութեան վերաբերեալ, այլ և պարսկական արքունեաց և պալատան ներքին և արտաքին արարողութիւնների ու կենցաղավարութիւնների նկարագիրը և նրա ներքին գաւառների և ցեղերի մասին կարևոր ծանօթութիւններ։

Այս մեծագին աշխատութիւնը, որ արժանացել է Պոլսում Սահակ-Մեսրովբեան առաջին մրցանակին և բաղկացած է 400 մանրատառ տպագրած երեսներից վաճառւում է այժմ 3 րուբլով, թէպէտ հեղինակի կենդանութեան ժամանակ նշանակուած էր գինը 5 րուբլի։

X—4.

ԺԻՐՕԴԵԼ ՊԱՍՏԻԼՆԵՐ

ՆՈՐՎԷԳԻԱՅԻ ՄԱՔՈՒՐ ՁՐԻՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ

ՆԵՐԿՈՐՉՈՒՄ Է ՆԵՐՇՆՉԵԼՈՎ ԵՒ ԿՈՒԼ ՏԼՈՎ.

Գերազ ա ցում են այն դեղատանտերին և քաղցրեղէններին, որոնք ծանրացնում են առաջարքը և ներգործութիւն չեն ունենում չնչառական զօ բանների վրայ։

ԺԻՐՕԴԵԼԻ ՊԱՍՏԻԼՆԵՐԸ

միակ կուպրային պաստիլներն են, որ պարգեւ են ստացել 1878 թ. Պարիզի համաշխարհային ցուցահանդէսում միջազգային գնահատիչներից։



Այդ պաստիլները ծծելիս չնչած օդը լցւում է կուպրի գոլորշիներով և օդի հետ գնում է ուղղակի հիւանդ տեղերը։ Ներգործութեան այս յատուկ եղանակով, և միևնոյն ժամանակ էլ իրեն բաղադրութիւնով, այդ պաստիլներն օգնում են այն ժամն դէպքում, երբ խորտրդ են տալիս կուպր գործածել։

ԴՏՆՒՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ.

Ամեն մի արկղիկում կայ 72 պաստիլ, գործածութեան եղանակի բացատրութիւնով։

ՎԱՃԱՌՈՒՄ Է ՄԵՆ ՔԱՂԱՔՈՒԹԵԱՄԲ,

L. GÉRAUDEL,

Pharmacien à Sainte-Meuehould, France.

Պահանջել գործածական ընդունուած կնիքը։

Պահանջել գործածական ընդունուած կնիքը։

Վաճառւում է Թիֆլիսում դեղատնային ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ։

(M.) 12—11

Արդուզարդի ՕՁԱՒՈՒ և ՀՈՏԱԻԻՏՏ ապրանքների

ՍԻՊՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ՌԻՉԱՐԴ ՎԻԼԴՏԻ Վարշաւում. արգոյ Հասարակութեան առաջարկում է վզկէրնի օճառ, անգլիական արիստոկրատիայի օճառ, հռաբէրնի օճառ՝ 12 տեսակ հոտով, Սիւէ-դը-Լեռնե, Տրիպս, Դելիօտրոպ։

ԹԻՓԸՆՅԻԿ ՕՃԱՒՈՒՆԵՐ

Բժշկական օճառներ, գլիցերինի օճառ, գունաւոր օճառ, օ-դը-կոլոն Տրիպլ և առատի էլէքսիրներ։

Վաճառւում է գաւառներում՝ շատ գեղատներում և վարսավէրների մօտ։

(260 2.) 30—14.

Ցայսմաւր է պարերի համար կատարելագործուած

ՀԵՐՈՓՈՆ

10 պիեսով

30 ՐՈՒԲԻ.

ՐԻՍՏՈՆ-ՕՐԳԱՆ

10 պիեսով 24 ՐՈՒԲ.

Կան մեծ քանակութեամբ նոր հարուստ ձեռքերգական և ուրիշ բաժանական գործիքներ և պարագաներ։

ՅՈՒԼԻՈՒՀԵՆՐԻԽ ՑԻՄՄԵՐՄԱՆ

ԵՐԱՇՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՊՈ.

ՄՈՍԿՈՒԱ, կուզնեցկի կամուրջ, տուն Զախարինի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ք. Մորսկայա, № 34 և 40.

Պատկերազարդ պրէյս-կուրանտն և հայնտաեորների ցուցակը — ձրի։

(188. ա.) 20—17

ԿՈՇԿՈՒՃ ԴԵՂ Ա. ՑԻԳԼԵՐ.

½ կտորը 30 կ.
1 կտորը 50 կ.

կարելի է ստանալ բոլոր ամենալաւ դեղատներում, դեղատնային և պարֆիւմերային խանութներում

(100 ա.) 20—17.

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ!!!

"ՎԻԿՏՈՐ ՌԵԳԻՆԻ,,

պարֆիւմերային գործարանի պահեստում

Է. ԲՈՒԼՕ. ԵՒԼԱՆԿ

Մոսկուայում

ՕՃԱՒ ՕԼԷՕ-ՎԱՋԵԼԻՆ ՌՈՅԵԱԼ-ԿՈՆԴՕ!!!

Վաճառւում է ամբողջ Ռուսիայի բոլոր դեղատներում։

(250 2.) 20—3

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ

ՋԵՄՍ Է. ԲԵԼԼ

Մոսկուայում, Պետրովկա, տ. Պենսկու։

Ներկայացուցիչ

ՌԱՆՍՈՄ, ՍԻՄՍ և ՋԵՖԵՐՆՍ

Պրէյս-կուրանտն և ցուցակն ուղարկւում է ձրի։

(277 2.) 12—3.

Дозволено цензурою. Тифлисъ 15 го Апрѣля 1892 г. Տպարան «Կաւկազ» Типографія «Кавказъ» Гол. пр. домъ Читахова